

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

Վ Ի Պ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻՆ

ՍԱՐԳԻՍ ԴՊԻՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Սոյն այս եկեղեցի՝ դարձեալ հրդեհեալ կիզաւ ընդ փայտակերտ շինուածոցն ի թուականին ոմի, փետրուարի եօթն: Եւ այնպէս մնաց մինչեւ ի թիւն ոմիս սեպտեմբերի թիւ: Եւ յետոյ յաջողութեամբն Աստուծոյ կրկին անդամ փայլեալէս շինեցաւ զկնի ամաց քանակութից, եւ ամաց վեցից՝ եւ աւուրց երկոտասանից:

Գանդի յամի Տեառն 1799, եւ ի թուականին հայոց ոմիս, սեպտեմբերի թիւ յաւուր Կիւրակէի Տօնի Վարադայ Խաչին հրաման եղեալ յարքունուստ Արիֆ Միմար աղայէն, որ էր թոն Գարա Միմարին, եւ նա եկեալ քէշֆ արար:

Եւ ապա՝ ի վաղիւ անդր, որ էր օր երկուշարթի, սկիզբն արարին շինելոյ զնոյն ի թուականի հիւնդիթին 1214 յառաջնում աւուր ամսեանն ճէմադիր չիվէրի, որ էր սեպտեմբերի թիւ:

Եւ ի յամսեանն նոյեմբերի թիւ, եւ ի ճէմադիր ամիսի 27 յաւուր Կիւրակէի աւարտեալ շինուածքն՝ օծաւ ձեռամբ Պատրիարքի քաղաքիս Տեառն Դանիէլի արհիեպիսկոպոսի:

Գերեզմանատուն ժողովրդեան այսր եկեղեցոյ՝ է ի Պէկ Օղլուն, որ է վայր զբարձալի եւ ծովահայեաց, որոյ ի ստորոտին է Տօթա Պաշէն յարեւիլից կուտէ առեգի ծովու պարտէզ քաղաքական:

Ուր զնն գերեզմանք երեւիլի տրանց բազմաց: Եւ մանաւանդ Յակոբայ Կաթողիկոսին Ջուղայեցոյ, որ զկնի գալոյ նորա ի Կոստանդնուպօլիս, եւ մնալոյ ամիսս եօթն ի նմա՝ փախճանեցաւ ի թուականին ոմիթ, յամի Տեառն 1680: Յօգոստոսի երկու, զօլով ամաց ութսունեակից:

Նաեւ շիրիմ Յակոբայ Պատրիարքին Ըստանպօլու Ջիմատացոյ նալ Օղլի կոչեց-

լոյ, որ փախճանեցաւ ի թուականին ոմիթ յուլիսի թիւ, յամի Տեառն 1764: Յեկեղեցւոյ Սուրբ Աստուածածնին, որ ի Գում Գափուն, զօլով ամաց փախճանեակից:

Եւ ի Պէկ Օղլուի աստ է քարեայ շինուած իմն Թադսիմ կոչեցեալ, ուր ջուրն եկեալ ստորերկրեայ անցիւք ի հեռուոր տեղեաց ժողովի աստանօր: Եւ ի ամա բաժանեալ ի բազում ծորակս, եւ հոսեալ յայլ եւ այլ կոյս՝ ընթանայ յաղբիւրս Պէկ Օղլուին, Գասրմ Փաշային, Ղալաղային, Դօփիսանէին, մինչեւ ի Պէշիք Դաշ: Ջջուրս զայս երեք մեծադործ թաղաւորն Մահմուտ ի թուականի հիւնդիթին 1145:

Եւ ապա ի բազմանալ բնակչաց այնր կողման, եւ ի չբաւելն ջրոյն ի պէտս նոցա, հրամայեաց Մահմուտ արքայ մերձ ի յակն վերայիչեալ ջրոյն, լեռնէ ի լեռնն որմ արհանել, եւ արդիլ եւ ջրակապ տանել, եւ որպէս ծովակ ինչ շտեմարան ջրոյ նորակերտել, եւ այսպէս արարեալ շէնցոյց զնուազութիւն ջուրցն, եւ մեծապէս արախ արար զբնակիչս կողմանցն այնոցիկ, եւ այս պատահեաց ի թուականի հիւնդիթին 1163:

Ի ջուր Թադսիմիս այսորիկ այլ ջուր ինչ բարեկամ խառնեալ յաւել եւ առատացոյց մայրն Սուլթան Սէլիմին Միհրիշահ Սուլթան, եւ բերել տալով զնոյն ի տարակայ տեղեաց ստորերկրեայ անցիւք, ուրպիս արար զբնակիչս կողմանցն այնոցիկ: Եւ այս պատահեաց ի թուականին 1212:

Հուլի ի Թադսիմս յայս ունին Փռանկքն հիւանդանոց մի, եւ հանդէպ նմին զոյ հիւանդանոց մի եւս արդին հայոց, զոր նորոյ շինեալ հաստատեցին աստ ի մաճանակս թաղաւորութեան Սուլթան Ալիմին երբոր զի ի թուականին հայոց ոմիթ:

Եւ մերձ ի սահման Պէկ Օղլուին է վայ-

բնն այն որ կոչի Գերասիմորա, և թարգմանի Կեռասապիւղ:

Եւ հանդէպ նմին դիւզն Դադաւա, որոյ բնակիչք են բոլոր ի յունաց աղէն, դառնին եւս քանի մի տունք Փռանկաց ոմանց:

Եւ եկեղեցի գեղջո աշտրիկ Այի Տիւմիդրի անուն, որ նորոգ շինեցաւ չքեղաւորն և մեծ քան զառաջինն, յամի Տեառն 1798: Եւ ի թուականի հիմքէթին 1213: Դիւզս այս անկամի ի վերնակողմանն ձորոյն Գաւառ փաշայի, եւ ընդ այն երբեւեկեմն քնակիչք ի Ըստանպոլ:

Իննեւորոգ է զուսն այն, որ ասի Քիրէճ Գափուսի: Ուր կան զործարանք կաշկարծ խաղախորդաց, աշխինքն տէպաղաղաց: Եւ քեարթանէք աղի զործողաց, աշխինքն է քիրիչ: Եւ աստ է փոքր մահճէմէն, որ է զառարան ընդ իշխանութեամբ Մօլլային Ղալաղալի:

Եւ յետ սորա է իսքէլէն Դօփխանէի, աննրման ընդարձակութեամբ և լիութեամբ բարեաց քան զայլ իսքէլէսն քաղաքին Ղալաղալի:

Ուր կայ ի հրապարակի նորին չորեք-կողման ոսկէղօծ քարաչէն գեղեցիկ աղբիւր, շինեալ ի Սուլթան Մահմուտէն ի թրւականի հիմքէթին 1145:

Գոյ և մզկիթ մի անդ, շինեալ ի Գւլըն Ալի կոչեցեալ զափուսան փաշայէ երկրորդ Սուլթան Սէլիմին հանդերձ մէտրէսէիւ, և բաղանաւ, որ ասի Փաշա Համամի ի թրւականի հիմքէթին 988: Եւ յամի Տեառն 1580:

Առաջի Դօփխանէին, որպէս և ի վեր կոչս ի Սալի Պաղարին, և այլ ի վեր մինչև ի Մալրոմօլոս, զոն ուրեք ուրեք զալճեանք որսարանք ձկանց յերկոսին կողմունն նեղուցին, առ եղբր մօտ ի ցամաքն ի մէջ ծովուն:

Եւ է զալեանն աշտպիսի ինչ, զի զչորս բոլորածեւ սինն ի նոճի փայտէ հարկանեն ի յատակ ծովու, և զիւրին կողմն նոցին խոտորանակի առ իրեարս բերեալ կապեն պարանաւ, և ի վերնակողման նորին ի մէջ չորեցունց ծայրիցն սեանց ի վեր կուսէ կապին՝ խղիկ ինչ առնեմ փոքրիկ, ծածք ունելով ի վերայ. և ի խղի անդ զցայլ և բոցերեկ նստեալ զխօսոյն պահնակէ անքուն տկամբ, ունելով առաջի իւր լարեալ ցանց

ուսկանի ի ծովու, որոյ չորեքին ծայրքն կապեալ են, երկուքն հաստատուն սակաւ ինչ ի վեր ի ծովէն ի ցիցս պնդեալ. և երկուքն հաստար ծովու ի ջուր ընկղմեալ, և պարանք ծայրիցն երկոցունց՝ ձողաւանօք առ ընթեր զխօսոյն ի խղի անդ առձեռն եղեալ: Եւ այսպէս ապա՝ զխօսոյն ի խղի անտի ի տեսանելու իւրում զխմբովին անցս ձկանց առ երեսօք ուսկանին, իսկոյն բարձեալ զերկոսին պարանան, որք կապեալ են ի ցանց ուսկանին, և յայնժամ ծայրքն ուսկանին, որք ծածկեալ են ջրով՝ ի վեր ելանեն, և ձկունքն մնան ի մէջ ուսկանին, և ապա զմիափայտ երկայն նաւակն իւրեանց ի ցանց ուսկանին հպեցուցեալ, և զձկունն ի ցանցէ անտի ի նաւակն թափեալ, և զնոսս ի միմեանց ըստ խոշորութեան, և ըստ մանրութեան զատեալ՝ որոշեալ, լնուն ի կողովս և վաճառեն:

Դարձեալ զարձցուք մեք ի կարդ բանի պատմութեան մերոյ:

Եւ աստ է Չափուչ Պաշի իսքէլէսին, առ որում է օտայարն դօփուց, և զմբերթեալ բարուկիր շինուած՝ ուր ծուլեն զդօփս յորում տեղուջ նստի և դօփճի պաշին:

Եւ յետ այնորիկ նորաչէն օտայարն բընակութեան պէս պէս զասուց զինուորաց, և տեղի կրթարանի նոցա ի նոր կարգադրողէ նոցին յեւրոպացի վարժողէ հնարեալ, նոր զվեստուր և նոր շարժուածովք:

Եւ անդ գոյ գեղեցիկ աղբիւր մի սակէղօծ նորոգեալ, առ ընթեր մզկիթին Մէհմէմէտ Ալայի:

Եւ յետ սորա է Սալի Պաղարին մերձ ի նոյն ճամին:

Եւ տեղիս այս կոչի Սալի Պաղարի, զի յերաքանչիւր երեքշաբթի աւուր բաղմութիւն մարդկան աստի և անտի եկեալ, լինի անդ տուրեւառութիւն վաճառի պէս պէս և զանազան զնէկաց:

Ուստի լինի երանել ի զաղաթ բլրոյն ի զառիւթիւր կոյս ընդ երկու հորիւր քառասուն ոտս առաքնանեալ սանդղածեւ մայթից, ի ձիհանկիր ճամբին, որ շինեալ է ի Սուլթան Սիւլէյմանայ յանուն որդւոյ իւրոյ ձիհանկիր կոչեցելոյ, որ յերթայն իւրում յուղեւորութիւն պատեւրաղմին նախ՝ ճէվանու, ընդ Սուլթան Սիւլէյմանայ հօր

իւրոյ, մեռաւ ի Հալէպ քաղաքի ի թուականի հիմնաքին 960:

Եւ զիսկն նորա բերեալ ի Բաղնապոլ թաղեցաւ ի ծածի Շէհգառէին: Եւ կոչի գառնիւք տեղիս այս ձիհանկիր Եօղաշի:

Ուր հայեցուածք տանցն զիտեն ընդ հարաւարդմն զէպի ծովն Պրոպանտիսի:

Եւ յետ սորա է ձանՖէտա Իսքէլէսին, և այս ի նոյն պատճառ, զի ի սմա է ձանՖէտա Թէքէսին, և ի թէքէի տառ թաղեալ է Իպրահիմ փաշա անուանի վէզիրն Սուլթան Սիւլէյմանին, զոր սպան արքայ ի թուականի հիմնաքին 942:

Եւ անտի ի վեր է տեղին այն՝ որ կոչի Ֆրնտղլը: Յորում է մեծ ճամին առ ծովեղբր, նորապեալ ի Սուլթան Ապտիւլ Համիտէն: Նաեւ աղբիւրն և բաղանի նորին:

Այս տեղի յանարէն կոչեցաւ Արկիրօրօյիս յԱտաթիսէ Պատրիարղէն Կոստանդինուպոլսոյ յաշակերտէ Ոսկերեանին, որպէս առ Սոկրատէս զիւրք է եկեղեցական պատմութեանց, զլուս իւն. «Տեսանելով Ատաթիկոս զուարճալի գտեղին որ ի հանդիպոջ, պարտ է տառց զստ անուանել Արկիրօրօյիս, այսինքն Արծաթաքաղաք, և ընդ ասել բանին՝ իսկոյն ընկարաւ տեղին զմականուսութիւն զայն»:

Առ որում է Գապա Դաշն ի ծովու, մերձ ի յափն նորին, և է առ հաստած ինչ շինւածոյ եկեղեցոյ, որ կոչիւր Կիւնկեօրմէզ Բէլիսատի:

Չորմէ առի զպատմութիւնս օսմանականաց, թէ ի թուականի հիմնաքին 895, ի 22երորդում աւուրն շապանի, և ի 24երորդում աւուրն թէմուզի, որ է յուլիս: Յանկարծակի յայտ եղեւ ամպ մի թխաղոյն, յորոյ թանձրամած մթութենէն անյայտ եղեւ մեծագոյն նստում քաղաքին Կոստանդինուպոլսոյ. և ապա անձրեւ տեղեալ հեղեղեալ, և յաղիսից անձրեւաց՝ դրունք անցից ճանապարհաց տեղեալ լցան, և ի յաճախութենէ հեղհեղեղ կաշմականց, բազում տեղիք շինուածոց տչեցան և ճեղքեալ պատտեցան, և ի սարսափելի տեսնէն անտի առ հասարակ ամենայն մարդիկ դարհուրեալ զղոցանի հարան, յորում մին ի կաշմականց անտի էջ ի վերայ եկեղեցոյ իրիք, որ կոչիւր Կիւնկեօրմէզ Բէլիսատի, որ էր մերձ ի յիւթ Մէյսանին:

Եւ քանզի՝ եկեղեցին այն՝ վասն զորոյ նորին կարի խմն հաստակաւորոց, մթերանոց վառողոյ արարեալ էր, զգմբէթ եկեղեցոյն, և զորոյր քարինս որմոց նորին յական թօթափել յօգս հանեալ այնպէս ցրուեաց զշինուածն զայն, մինչ զի՝ ոչ մնաց անտանօր հետ և նշան շինուածոցն, որ ի քարանց անտի յերկինս եղիւոց և զարձեալ ի վայր անկելոց, նաեւ ի շարժմանէ ուժղեակի թեղմանն այնորիկ աւերեալ կործանեցան շինուածք չորից մեծամեծ թաղից բնակութեանց չորջ գնովաւ եղելոց, և հողոյ հաւասարեցան, և ոմանք ի քարանց անտի, անցեալ ընդ ծովածոցն Բոսանապոլս անկան ի Ղալապա, և ոմանք յիւրաքիտար: Իսկ բոլորածիր զմբէթն եկեղեցոյն անկաւ ի ծով մերձ ի Գրդլի Առա, և մնաս մեծ եղեալ՝ բաղում մարդիկ մեռան զրեթէ թուով իրր հինդ հաղար, և այս մատախապատ մթութիւն ծխոյ այնպէս պատեալ պաշարեաց զէննս Կոստանդինուպոլսի, մինչ զի ի միջօրէէ մինչև ցիւնկերորդ ժամն տունջեան, զրեթէ տիւն՝ զիշեր համարեալ եղեւ:

Ուր միւս պատմիչն Գարաշէյէպի Զատէ առէ, թէ՛ այն հաստած շինուածոցն զորմէ առ թէ՛ անկաւ ի Ղալապա, այժմ կայ և մնայ մերձ ի Դօփիսանէն և ի Ֆրնտղլը յեղր ծովուն բառ մասին ջուր և բառ մասին արտաքայ ջրոյն մնացեալ ի տեղոջ անդ՝ որ կոչի Զիգմէճիլէր Թէքէսի:

Եւ մասնաւոր անուամբ Գապա Դաշ:

Եւ ի շինել մերձ ի նա զծովեղբեալ աւան իւր ի թուականի հիմնաքին 1213: Բեօսէ Բեահեւոյն՝ Զէյպի էֆէնտի կոչեցեալ, բաով ծեփել տուեալ զխորտուրտ խնդրունս նորա, զուրեաց և կոկեաց զԳապա Դաշն զայն: Եւ մերձ ի նա հոռեցոյց աղբիւր բարեհամ ջրոյ:

Ուր ի Գապա Դաշի ի ծովեղբր անդ զոն ևս երկու աղբիւրք նորալէն: Որոց զմին շինեալ է Սէլէտար Առնափուս Եահեայ էֆէնտին յոթ զեղեղիկ յամի տեառն 1783:

Եւ զմիւսն որ կայ մերձ ի նա ի վերնաւորման նոյն տեղոյն, շինեալ էր յառաջագոյն Հէքիմ Պաշի Օղլի փաշայն յառաջին վէջերութեան իւրում ի թուականի հիմնաքին 1145:

Ի մամանակի անդ յորում Սուլթան

Մահմադ ջուր բերեալ, շինեաց Քաղսիմ ի Պէկ Օղլին, ի ջրոյ անտէ յայնժամ եւ Ալի փաշայն, որ էր վէզիրի աղէմ, բերեալ շինեաց զաղբիւրս զայս: Առ ընթեր սորին է Չիգմէնլիէր թէքէսին:

Եւ տառի յառաջ երթեալ հասանիմք ի տեղին յայն՝ որ կոչի Այաս Փաշա, յորում գոյին ի հնումն յարկի Էպուսիւուտ է-Փէնուոյն, որ էր միւլթի Սուլթան Սիւլէյմանին: Եւ Քեօփրիւլի Օղլի մեծի վէզիրին:

Յորոյ ծովեղերն է մեծ արքունի պարտէզ, Տօրմա Պաղէէ կոչեցեալ, փանդի տեղիս այս յառաջագոյն ծով էր, եւ յետոյ լցմամբ հողոյ ցամաք եղեալ՝ յօրինեցաւ պարտէզ արքունի:

Աստանօր գոյ աղբիւր մի բարեհամ որ կոչի Կիւմիշ սուլի:

Եւ այլ յառաջ երթեալ գոյ իսքէլէ մի փոքր, որ կոչի Արէսլ իսքէլէսի:

Եւ մօտ ի նա է Խայրատին, յորում գոյ մէտրէսէ եւ թիւրպէ Խայրատին փաշային՝ առ ծովեղերն, եւ երկու փափ տառք տաճկական խոշոր զրոյ գծեալ ի արտաքոյ ճակատ որմոյն:

Սա նախ կոչիւր Խրաքը, եւ էր բնակիչ Միտիլի կղզւոյն, եւ ապա՝ նաւ մի կաղմեալ ութսուտասն նոսրաւոր, եւ ի ծովամարտութիւն, եւ յետ բազում երեւելի գործն ցոյցանելոյ նորա ժամանակս ինչ տակալ զնաւն իւր ի Միտիլի կղզւոյն չողաւ նաւամարտութեամբ ի կողմանս Ճէզմայէրի, եւ անդ յոյժ արդիւնս գործոց երեւցուցեալ պետացաւ, եւ ընդ ազգին Փռանկաց բազում անգամ մարտ եղեալ յաղթական դառաւ եւ եղև անուանի, զոր նոքա կոչեն պաուպաուսա, այսինքն կարմրամօրութ: Եւ անսի ապա՝ եկն հրամանաւ Սիւլէյման արքայի ի Ըստանպոլ ի թուականութեան հիւսիսի 940: Յամի տետն 1533: Ուրանօր պատիւ մեծարանաց դաեալ յարքայէ՝ եղև Գափուտան փաշա, եւ յայնմ պաշտօնի եւս բազում պիտանի գործս գործեալ, ապա մեռաւ ի թուականութեան հիւսիսի 953: Եւ յամի Տետն 1546:

Եւ թաղեցաւ ի մէջ վերսյիշեալ թիւրպէին իւրոյ, կեցեալ տմս 80 եւ այլ աւելի:

Եւ առ ընթեր նորին է Պէշիքաշ պաղէսին, յորում գոն հովանոցք թաղաւորական,

եւ պաշտաւ գեղեցիկ եւ վայելուչ, եւ ի նմին քան զսոնեանին զարմանաչէն եւ ազնիւ է, ծովեղերեայ կապարածածք շինուածն եւ թընդթիւթեայ, Չինիլի Քեօշք կոչեցեալ, որ աղբիւրք առ իւրաքանչիւր պատուհան ճանապարհ արարեալ հոսին ընդ ծորակս, եւ անդրէն զարձեալ զարձ արարեալ ընդ ցնցուզս թափին յաւաղանս շատրվանաց:

Զպալատս զայս (քանզի յոյժ սիրէր սուլթան Մէհմէմէտն Զորոյղ) ընդարձակագոյն եւս շինեալ մեծացոյց, ընդ նմին կառոյց եւ զՉինիլի Քեօշքն ի թուականութեան հիւսիսի 1090:

Եւ ի վեր կուսէ սորին կայ կայացեալ զիւրաքաղաքն Պէշիքաշ, որ սաի յունարէն Տիրիօղլիսիօն, այսինքն կրկնակապին:

Եւ է սա տեղի շէն եւ բազմամարդ եւ շարուտ պաղար ի նմա, ունելոյ բնակիչս ի տաճկաց՝ ի յունաց՝ ի հայոց եւ ի հրէից: Գոն ի սմա բաղանիք եւ մզկիթք, յորս երեւելի է մզկիթն եւ մէտրէսէն Գափուտան Սինան փաշային, որ էր եղբայր Ռիւսթէմ փաշային, որ մեռաւ ի թուականի հիւսիսի 961: Եւ թաղեցաւ յիւսիսաւոր:

Գոն ի սմա եւ երկու եկեղեցիք յունաց յանուն Սուրբ Աստուածածնին:

Գոյր եւս աստանօր եւ ժամատուն մի հայոց փոքրիկ՝ յանուն Սուրբ Աստուածածնին, բայց քակեցաւ պատճառաւ շնչին ինչ կուս, ի թուականի հիւսիսի 1172: Յամի տետն 1759: Ի ժամանակս սուլթան Մուսաֆային Երրորդի:

Կայ ի զիւրաքաղաքի աստ եւ սակաւ ինչ բնակութիւն հրէից:

Ի սահմանի Պէշիքաշին գոն բազում պարտէզ՝ տեղիք զրօսանաց: Եւ ի սորա շարին է ծովեղերեայ տեղին՝ որ կոչի Գըլը Ալի:

Եւ յետ այնորիկ Մէվլէվանէն, որոյ առաջակողմն կոչի Մէվլէվանէ Էօնի, եւ է ի նմա յարկ ինչ, որ է մէվլէվի տէրօլիւաց տեղի պատուման ըստ ծիսի իւրեանց յիւրաքանչիւր եօթնեկէ յաւուր չորեքշաբաթի:

Եւ այլ յառաջ ի դնալն զէպի վեր ի քաղաքաղիւզն Օրթաքեօյ, ի լանջակողմն լիւրին ի բարձրագոյն տեղում երեւի գմբեթաւոր թիւրպէ մի կղմնորածածք, եւ է սա չիւրիմ տուն միւս երեւելոյ ի գիտականացն դասէ, կոչեցեալ Էնահայ էֆէնտի, որ էր

կաթնակերպ և համէրանի սուլդան Սիւլէյմանայ ի տղայական տիւն նորին ի Տրապիզոն քաղաքի, և յետոյ ի թաղաւորելն սուլդան Սիւլէյմանայ ի Ըստանպօլ եկեալ, և յարքայէն իրր կաթնակերպը՝ պատիւ մեծաբանաց դետալ, եղև անուանի յոյժ, և ապա մեռաւ ի թուականի հիւսիսին 978: Չորոյ թիւրպէն յետոյ շինեաց Երրորդ սուլդան Միւրատ, թոռն սուլդան Սիւլէյմանին:

Այս Եահեայէ Էֆէնտի շինեալ է մզկիթ մի ի բերդին Եօրուսի ի պօղապի անդ սեաւ ծոփուն:

Եւ ի սմի վայրի են առնք միւֆթի Էֆէնտեայ առ ծովեղբորն, և յետ կուսէ նոցին պարտէզք և պուսթանք:

Եւ զինի սորա է Սուլդան Եալբան, որ յառաջ Զիրազան Եալբան կոչիւր:

Զի ի ժամանակս ծաղկելոյ կախաչաց ալսինքն լալէից, լուցմամբ ճրագաց և մոմեղինաց ի գիշերի՝ զարդարէին զպարտէզն ի բերկրութիւն սրտի, և ի հրճուանս ուրախութեան մեծանուն Իպրահիմ փաշային, որ էր վէզիրի տղէմ սուլդան Ահմէտին Երրորդի:

Եւ այլ յառաջ երթեալ հասանիմք ի յՈրթապիւղ ի ճամի Պուսնին: Եւ գիտելի է, զի զճամիս դայս շինեալ էր ի վաղուց թէպէտաւոր ոմն Մէհմէմէտ անուն: Եւ վասն զորոյն հնացեալ, ապա Մէհմէմէտ Քէթիւստանորդեաց ի թուականի հիւսիսին 1134, որ էր քեահեա՝ հռչակաւոր վէզիրին վերսիշ-

եալ Իպրահիմ փաշայի՝ և վեհայ նորին, և այս պատահեաց ի ժամանակս թաղաւորութեան սուլդան Ահմէտին Երրորդի:

Յայս զիւղ բնակին տաճիկք, հայք, յոյնք և հրէայք: Բայց բազում են աստ հրէայք քան զհայս՝ քան զյոյնս, և քան զտաճիկս: Ուր դոյ և եկեղեցի մի հայոց յանուն Սուրբ Աստուածածինն՝ խնդրակաւ տար կոչեցեալ, տարակալ ի ծովէն, շինեալ և բնդարձակեալ ի ժամանակս Յոհաննու Պատրիարքին Բաղիշեցոյ:

Գոյ և եկեղեցի մի յանաց մերձ ի ծով յանուն Փոկասու Հայրապետին, զոր յոյնք կոչեն Այի Ֆոյս:

Գոն և այգմամբ երկու, մին Այիա Բարապիւի՝ Ուրբաթ Այգմասի կոչեցեալ:

Իսկ միւսն Այի Եօսիկ, ուր բազմութիւն ժողովի ի խորէլսին, ի 23 ամսեանն ապրիլի:

Էր յայգմամբ աստ՝ և մատուռ մի խալիսուլ, և զայն ևս կործանեցին ի ժամանակս թաղաւորութեան սուլդան Ահմէտին Երրորդի:

Ի գիւղի աստ նախագոյն անկեալ զարմանեցաւ և յայտ ածաւ ի հրէից բոյսն էնկինտը՝ բերեալ ի Ֆրէնկիստանէ, յարմէհեալ մինչև ցայժմ են ամք իրր հարիւր յիսուն:

Եւ յետ սորա է տեղին այն, ի շարի ծովեղբեայ տանցն քրիստոնէից հայոց և յանաց, որ կոչի Գօյուն խալէլսի:

✱

Առաջին պուսուն Ռումէլեան կողման Պօղապ Էլիին, է Տէֆթէրտար Պուսնին: Եւ է սա նախկին տեղի պինիշի զրօսանաց արքայի:

Եւ քանզի յառաջ էր ի ծայրի աստ պուստն էթմէքճի Օղլի Տէֆթէրտար Ահմէտ փաշային առ սուլդան Ահմէտիւ Առաջնայ, յայն անուն կոչեցաւ սա Տէֆթէրտար Պուսնի:

Այն Տէֆթէրտար Ահմէտ փաշա մեռաւ ի թուականի հիւսիսին 1028: Ի ժամանակս թաղաւորութեան սուլդան Օսմանին Երկրորդի, և թաղեցաւ ի շիրմի ի մզկիթի սուլդան Պայէզիտին Երկրորդի ի Ըստանպօլ:

քաղաքի:

Այսին այս պալատ յետոյ քանդեալ ի հիմանց՝ շինեցաւ նոր պալատ մեծաշուք և զեղեցիկ՝ ի բնակութիւն զատեր սուլդան Ապտալ Համիտին, յամի տեառն 1793:

Այս սար և բազուկ ծածկէ զտեսիլ նեղուցին բնակչացն Ըստանպօլու:

Եւ աստ առ եղեր ծովուն դոյ մզկիթ մի զմրեթեայ և կապարածածք:

Եւ յետոյ ի շարի առ ընթեր սորին է էթմէքճի Օղլի Տէրէսին, յանուն վերոյիշեալ Տէֆթէրտար Ահմէտ փաշային:

Եւ յետ սորա է գիւղն այն, որ կոչի Գուրու Չէմէ, որոյ լեռանցն գիրք առա-

պարք են՝ և անկուր ստից մարդկան։ Յուրում դոյ աշագմա Սրբոյն Տիմիդրիտի ի բարձրագիտակ տեղում։ Կերտուած Թաղաւորաշէն և հաստատուն։

Ուր ընդ երկրաւ ընթացեալ զամպարօք ժամանեն մինչ ի յակն նորին, և է սա աշագմա հրաշագործ, և ունի ջուր բարեհամ։

Դոյ ի գիւղի աստ և ևկեղեցի մի հայոց՝ յանուն Երեւման Սաշի, որ ի հիմանէ քակեալ շինեցաւ ՌՄՈՒ Թուականին հայոց։ Եւ յամի տեառն 1798, փետրվարի Իէ։ Եւ օծեալ ձեռամբ Յոհաննու արհիեպիսկոպոսին, կոչեցաւ Սուրբ Սաշ, ըստ առաջին անուանակոչութեան իւրոյ։

Շինեցաւ ի հիմանէ նոյնդունակ և ևկեղեցին յանաց՝ որ անդ Այի Տիմիդրի անուն ի նմին ամի ըստ ևկեղեցւոյն մերում քարուկիր շինուածով։ Բայց վառն աճապարելոյ ճարտարապետին, և զկաղապարն՝ որ ընդ դմբեթան՝ ի բաց առնելոյ, դմբեթն իջեալ փլաւ, և զրապումս ի զործաւորաց վնասեաց մահուամբ։ Բայց խեղոյն հրամանաւ բարերարոյ առն Մէհէմէտ փաշայի վէդիրի աղէմի սուլդան Սէլիմին երբորդի դարձեալ վերստին յոյնք սկսան շինել, առնելով դառաստաղ նորին փայտեայ որպէս զմերն, և այս պատահեաց ի Թուականի հիճրէթին 1212 ի ռէմէդանի 22։

Յայսմ գիւղի սակաւ են տաճիկք և Լալք, իսկ յոյնք և հրէայք բազում։ Եւ տունք առ ծովեզերն արանց երեւերեաց իւրաքանչիւր ազգաց։

Ի մէջ աշկատանեալցն գոյ ևս աշագմա մի Անայիփաի կոչեցեալ, այսինքն Լամբարձման։

Եւ մօտ ի նա այլ աշագմա Այ Նիգօյային։

Եւ աստ է զեղեցիկ պարտէզն Էմա սուլդանին, զատեր սուլդան Ահմէտին երբորդի։

Եւ մօտ ի սա է ծովեզերեայ պալատն Դրնադճի Լասան փաշային, զոր այժմ սուլդան Ապուլլ Լամիտն նորոյ շինեաց զեղեցիկ փայլ բնակութեան, վասն զստերն իւրոյ, և չքնաղ պարտէզ սակաւ նորին սուլդանին։

Եւ հանդէպ վերոյիշեալ պալատիս ի մէջ ծովուն գոյ ժայռ ինչ նման փոքր կղզւոյ ծանծաղ ջրով ծածկեալ։ Եւ այլ կղզեակ ևս ի վեր կոյս նորին։

Եւ առ առօք ի ծովու գոյանան պատ-

ւական սարէք, որք ունին մորթա խեցեղէն, և ճաշակ համեղ տան՝ որոց զայնս ուտեն։

Եւ գիտելի է, զի վերստեալ Դրնադճի Լասան փաշայս է այն, զոր յաւուր միում ի յարձակիլ երախանի արքունի Տիմանին, և յելանելն արտաքս յԱրզլ վէդիրի աղէմ Եէմիշճի Լասան փաշային, զճեցուցեալ առաջի աշիւր զրան պալատին, որ կոչի Պապի Սա'ատէ, նշանացի ակնարկութեամբ սպան՝ հատմամբ զլիսոյ նորա, յորժամ նա ի դուրս ելանէր ի համբուրելոյ զձեռս արքայի։ Եւ ոչ եղև յայտ թէ՛ զի'նչ իցէ յանցանք նորա. բայց այսչափ ինչ միայն, զի Դրնադճի Լասան փաշային՝ տուեալ էր կուսակալութիւն Պաղտատու, և նա չէր կամեցեալ զնալ։ Եւ այս պատահեաց ի Թուականի հիճրէթին 1011։

Եւ յետ սորին է Սարրաֆ Պուռնին, ուր է տաճար հին՝ Այի Եանիրին, այսինքն Սըրբոյն Յոհաննու։

Եւ զկնի նորա է Այի Փաշա Էօկին, վասն իննելոյ սորա զառաջեաւ ծովեզերեայ պալատին Այի փաշայի։ Յորում են պարտէզք և պուսթանք։

Եւ ապա՝ Առնափուտ Քեօյին, ուր են տունք պարոնացն Վլաշաց և Պուղտանաց, և նոցին պաշտօնէից և զործակալաց։ Եւ տունք բնակութեան նաև այլոց յունաց բազում յոյժ, յետ կոյս երկայնեալ ի լեռնամէջ անդր։

Եւ ունի սա ևկեղեցի մի յանուն Արխանկէյօսին՝ այսինքն Հրեշտակապետին Միքաէլի, յոյր սակա զիւղս այս կոչի յունարէն Առոմադոս, այսինքն Անմարմին։

Եւ գիտելի է զի յամի Տեառն 1798, և ի մայիսի ԺԵ, այրեցաւ բոլոր զիւղս այս ևկեղեցեաւն հանդերձ, որ զեռ նորոյ էր շինեալ։

Բայց վէդիր ժամանակին Մէհէմէտ փաշա՝ կրկին շինել ետ զնոյն։ Եւ ի միջոցի սակաւ ժամանակի չէն ևս ապատ եղեալ զիւղս այս, ևս քան զեւս լցաւ շինուածով։

Ասեն ոմանք թէ՛ վասն բնակելոյ աստ նախագոյն ոմանց յառնափուտ ազգէն, կոչեցեալ է ի տաճկաց Առնափուտ Քեօյի։

Բայց յետոյ յոյնք անդր յաճախեալ և բնակութիւն ի նմա կայեալ՝ զիւղաքաղաք լմն եղեալ է։

Աստանօր դոն աշագմայք չորք. այսինքն

Այի Եղիա ի մէջ երկուց չերանց, որ ունի ջուր բարեհամ: Այիա Գերբաղի: Այիա Բաբադեա: Եւ Այիա Օնոֆրիոս, որ է ի Փաշա Մահալէսին:

Բնակիչք սորին են յայնք եւ հրէայք սակաւ: Ուր եւ նորոգ չինեցաւ պինդ էկրի ի մերում ժամանակի ի ծայրի անդ՝ որ հայի ի վերայ Մէղարէամային, ի նոյն վերայիւեալ Մէհէմէտ փաշայէն:

✱

Երկրորդ Պուստնն է Ազնաթ Պուստին, յունարէն Մէղարէամ կոչեցեալ՝ որ Թարգմանի մեծ հոսանք. զի ի մէջ այլոց հոսանացն Պոպաղիչին մեծ է հոսանքն սորա, որ այնքան բնութիւն ունի, մինչ զի խաշփառք, եւ այլ սոցին նման ոտանաւոր կայտաւոր չկարելոյ ի մէջ ջրոյն ի վեր զնալ առ աստիկ բնութեան յարձանացն ի ծովեղբն ի դուրս ելեալ զնային, մինչեւ անցանել նոցա ընդ այս սահման, եւ ապա՝ զարձեալ ի ծով իջանէին, եւ այնպէս սովորութիւն կալեալ՝ հետք եւ զիծք զնացից նոցա երեւէին ի սայալատակ ծովափն, բազում երթեկեկութիւնք նոցին մաշեալ զծեալ ուրեք ուրեք զվիման: Զորմէ կայ զրեալ ի գիրս պատմողաց:

Ուստի՝ եւ մեծածեծ նաւքն, եւ փոքր նաւակքն եւս որք ի վեր զնան՝ աստանաւ պարանաւ տրտաքուտա տան զինքեանս քարչի՝ մինչեւ անցանել նոցա ընդ բնութիւն ջրոցն հոսանաց:

Ընդ մէջ գեղջս ախարիկ, եւ ընդ մէջ Պէպէքին, ի դառ ի վայրի բարձրաւանդակին երեւին հիմունք ինչ հին շինուածոյ մենառանի իրիք:

Ի չարի սորա են պարտէզք, եւ ծովեղբեկայ պոյատք տանկաց, եւ տուն հասան Խալիֆէին, որ եկնիւէրի Աղասի էր՝ եւ սպանաւ ի թուականի հիճրէթին 1041: Ի ձեռաց զօրպոյից՝ ի ժամանակս սուլթան Մուրատին Զորբորդի:

Որում կից է Պէպէքն, ուր գոյ պարտէզ տրտնի Պէպէք Պաղչէսի կոչեցեալ: Եւ պատճառ կոչման սորա Պէպէք Պաղչէսի այն է, զի՝ մի ամն ի նախնի արքայորդոց, զոյով փոքր մանկիկ, տեսեալ է օձ ի ջրջին իւրում մի պարտիդի տատ, եւ հարցեալ թէ՝

զի՞նչ է այդ, եւ վերականգն պատասխանեալ թէ՝ պէպէք տիբ սուլթանիւմ:

Եւ քանզի յետ այնր ի կամեն նորին զնայաւոր տէր վերականգնին, թէ՝ երթիցուք ի պէպէք պաղչէսին: Վասն որոյ անուն տեղւոյն եղաւ Պէպէք Պաղչէսի: Եւ էր այսպիսի խմն պարտէզ արքունի՝ զեղեցիկ հովան Պէպէքին, տարածեալ առ ծովեղբն իրր մղոնաչափ մի եւ այլ աւելի: Բայց յետոյ լքեալ եւ քակեալ քառ մասին՝ եղեւ տեղին այն դարան եւ որջ անդդամաց եւ ապիրատից: Եւ ապա մեծագործ Իպրահիմ փաշայն վէզիր սուլթան Ահմէտին Երբորդի, չաջեալ զանորէնսն ի տեղումն անտի՝ չինեաց զպարտն, զրազանին եւ զմզկիթն, եւ ըզարտա նորին եւ վաճառեաց զսահման տեղւոյն ոչնորիկ զբնամայրացն եւ զծովեղբերոցն՝ մինչեւ ի տուն հոսան Խալիֆէին:

Վասն որոյ չինեցան տունք զանապոսն սոլդաց յունաց, հայոց, հրէից եւ տանկաց, եւ սորա կացոյց գտեղին զայն յիշխանութենէ վոյսօտալին, եւ ի նորին տալանաց, ի թուականի հիճրէթին 1133: Յամի տեսն 1725 ի ժամանակս Երբորդ Խուլթան Ահմէտին: Եւ նոր անուն մի եւս վերադիր արաբեալ՝ կոչեաց Հիմաշունապատ:

Յասաջ քան զչինութիւն տեղւոյս՝ զոյր ի Պէպէք քեարխանէ պատմածոց: Իսկ այժմ պատմածիք ընդ մեծի մասի են ի Եէնի Գալուն լանկայի, առ սրմով պարսպին որտաքոյ ի ծովեղբ անդ: Եւ ըստ մասին ի հանդիպոյ յուրբուտար քաղաքի, եւ քորս են որք երանդ երանդ զունովք եկմէնի յօրինեն զթիւրպէնաւ տպահարելոյ ի նաւա զծովկանկար վայելութիւնս, եւ առնելով զնոսա տենչայի աչաց տեսանելոց, եւ սխորմելի ձեռաց չօշափելաց:

Եւ է Պէպէք Պաղչէսին երկրորդ Թաղաւորական պինիչի:

✱

Երբորդ պուստն է այն, որ տաի Գայալար: Ուր տարտած քարինք կան բնական, յորում է բնակութիւն տանկաց, եւ փոքր մէսիտ մի ի նմա հասարակ եւ ասմկական:

Այս բազուկ երկայնեալ է քան զայլ բազուկն ի մէջ ծովուն զէպ յԱնատոլեան կողմն Ասիայի, վասն որոյ նեղ է միջոցն

նոյն ծովուն քան զայլ տեղիս Պողոտ ի չիին, և յայն սակս կոչի յունարէն Լէմօգօրի և թարգմանէ Պողոտ Քէսէն:

Անցեալ ընդ այլ պարտեզս հասանիմք ի մէկարիտաւոր տաճկաց առ ծովեղերն, յորում վայրի բազում են յոյժ նոճիք այսինքն սէրսի ծառք: Ուր կանայք բնակչացն տեղւոյն, և Հիսարին չրբիւրճի պատուեալ ազանեայրն տաճկաց, զկառուեղէնս ի ջուր ծովուն լուացեալ սպիտակացուցանեն:

Եւ զոյգն ինչ յառաջ գնացեալ, կայ անտանօր կայացեալ Ռումէլի Հիսարին, որ է հանդէպ Անատոլիան Հիսարին, յորոյ ի ծովեղերն դոն թողանթք շարեալ, և բերանք նոցին ի ծովակողմն ուղղեալ յարմարեալ, ուր պահնակք նստին ընդ յարկաւ:

Եւ տիղտար բերդակալ և պահնակ զօրք ի բերդին կաթցեալ:

Չայս բերդ չինեալ է սուլթան Մէհմէտ-մէտն Ֆաթիհ ի միջոցի երկից ամաց, վասն որոյ երեք պուրճք են ի սմա, ըստ թուոյ ամսացն յարմարեալ: Որոց երկուքն են մեծ՝ անկեալք ի կողմն լերին, և երրորդն սակաւ ինչ փոքր ի ծովեղեր անդ, չինեալ ի թուականի Հիւնթիթին 856: Յամի տեառն 1452: Ջկնի յիսունեւութն ամի չինման Անատոլիան Հիսարին: Իբր ամաւ մի յառաջ քան զսուտն թաղաւորեալ քաղաքին Կոստանդինուպօլսոյ: Զորոյ պարսպի թանձրութիւն ասեն լինել 22 ոտք, իսկ զաշտարակացն՝ ոտք 30: Եւ սլորտք չինուածոյ պարսպին ընդ երկից պուրճիցն ձեւոյ տառիցն տաճկաց հեղէ ասեն անուն Մէհմէմէտ:

Եւ ի մէջ բերդիս բնակին տաճիկք, և արտաքոյ Հիսարին ի ծովեղերն դոն ապարանք և շուկայ, և քաղանի, և մէսնիտ, զոր չինեալ էր սուլթան Մէհմէմէտն Ֆաթիհ, և ապա՝ նորոգեաց սուլթան Մահմուտն թաղմահմուտ:

Նոյնպէս և ի կողման ցամաքին դոն տունք բնակութեան, և ծովահայեաց պարտէզք, որոյ կեռասն անուանի է յոյժ. եւ մանր վարունկն համեղ, ռուս խիյարի կաշեցեալ:

Աստ զոն հայք արտաքոյ պարսպին բրնակեալք ի կողմն գառ ի վերին, և ունին ժամատուն յանուն Սրբուհայն Անդիսոյ Կուսին:

Եւ օդն՝ ուր բնակին հայք, յոյժ քաղցր

է, վասն զորոյ տեղւոյն բարձրահայեաց, և հանդիպակաց շնչման հողմոյն հիւսիսոյ:

Պոստն Ռումէլեան Հիսարին կոչիւր ի հիւսիս իրմէն, վասն լինելոյ ի վերայ լեռնն նորա մեհնի դիցն իրմիսի, և է սա տեղն մի յանձուկ տեղեացն նեղուցին Վուրօրօսի:

Եւ ընդ այս տեղի անցոյց յայսկոյս զօրս իւր Դարեհ, որ և Արտաշէս, հայրն Քսերքսիսի, որ թագաւորեաց 517 ամօք յառաջ քան զգալուտ Փրկչին մերոյ, և շինեաց յայնժամ կամուրջ ի սմա Մանտրօլլիս Սամօսացի, և էառ պարզեւ ի Դարեհէ արքայն պարսից պսակ ոսկեղէն: Այսպէս զբէ Մէլէզլիս:

Այլ ձեք դարձեալ դարձցուք ի կարդ բանի պատմութեան մերոյ:

Եւ ի վեր կոյս Ռումէլեան Հիսարին՝ է տեղին այն, որ ասի Շէյխան Աղընտրօի, ուր ջուրք եռան և մրոմբուն, նաւակաց վտանդաւոր, և նաւավարաց ահընկէց, և նաւորդաց վայր երկիւղալի:

Եւ անցեալ առ սուլթա, է տեղին այն, որ կոչի Պալթա Օղլի Լիմանի, որոյ ծովեղերն զեղեցիկ է տեւեամբ, բայց ներքաւկողմն վատառողջ, և զուրկ ի շնչմանէ հողմոյն հիւսիսոյ: Ունի դաշտիկ հարթագեւորն, և հանք քարանց ի լերինս իւր: Գոն ի նմա պարտէզք և ապարանք, և սակաւ բնակութիւն տաճկաց: Ուր երկու մշտահոս գետակք հոսին ի յերկուց հովտաց: Եւ խառնեալ փոքր ջուրն ի մեծն, թափի ի ծով:

Աստանօր Սիւլէյման օղէկ Պալթա Օղլի կոչեցեալ (որ էր Գափուտան փաշայն Ֆաթիհ սուլթան Մէհմէմէտին, և ի պաշարման քաղաքին Ըստանպօլու՝ ունէր ընդ իւրեւ դադէրկայ նաւա չորեքհարիւր՝ և կայր մնայր ի տեղւոյն յայսմիկ, վասն չրթթայիւք կայեալ լինելոյ մտից ծովածոցի քաղաքին, որ ընդ Մէրայ Պուսնի՝ և ընդ Գուրչունլի Մախզէն), պատրաստեալ նաւա եօթանասունեւերկու, եհան ի ցամաք, և զնաւան զայնոսիկ ի նաւահանդստէ աստի ի վերայ անուտուր սայլից՝ որք ճարպով օժեալ էին, քարչել տալով՝ նաւա առաջատար պարգիւով ի նաւան յայնոսիկ, ընթացոյց ի ցամաքի անդ՝ և յերուտ կողմանէն Դաւաղայի՝ անցուցեալ ընդ Օդ Մէյսանին իջոյց ի ծովածոցն Եղջիւրային հանդէպ դը-

բան Ֆէնէրին, ուր շինեցաւ նոքօք նաւակա-
մուրջ՝ ի դիւրութիւն մարտի զօրացն ասա-
կաց յայնմ կողմանէ՝ յառուան քաղաքին
Ըստանպօլու:

Եւ աստ բնակին միայն սակաւ տաճիկք:
Սակայն եւ աս ծովեղեր սորին արքունի հը-
րամանաւ շինեցան նորոյ՝ քանի մի տունք,
ի հայոց եւ ի յունաց, ի թուականի հիճրէ-
թին 1212:

Ի յամալտիսիս Պալթա Լիմանին,
կալ տեղի մի որ կոչի Լէվէնա Ձիֆլիկի,
շինեալ եւ հաստատեալ ի ճէզայէրլի Հասան
փաշայէն, ի ժամանակի իշխանութեան իւ-
րոյ: Որ ապա եղև տեղի կրթութեան դասու-
թիւն նորոյ զօրաց ի զրոհէն պօսթանձեաց
էւրոպեան սովորութեամբ փորձելոց, յոր-
ժամ ըստ նորադիր կանոնին օսմանականաց
շինեցան բնակութիւնք խիւսարէճի եւ
լաղմճի զօրաց ի Թաթեօյլըն, եւ զօփճի զօ-
րաց ի Դօփթանէն: Եւ այն եղև ի թուա-
կանի հիճրէթին 1207:

Եւ զկնի այնորիկ ի վեր ընթացեալ աս
ծովեղերը է տեղին այն՝ կոչեցեալ Էմիր-
կիտուն Օլլի Պաղչէսի, որ յառաջ ասիւր Ֆէ-
րիտուն Փաշա Պաղչէսի: Եւ յետոյ ասացաւ
Էմիրկիտուն Օլլի:

Ի պատճառէ աստի յայտմանէ, զի յառ-
նուլ սուլթան Միւրատին զքաղաքն Բէյլան ի
թուականի հիճրէթին 1045, իշխողն նորին՝
որոյ անուն էր Դահմապօլ Գուլիսան՝ որդի
Էմիրկիտունէ խանին՝ հնադանդեցաւ արքա-
շի, եւ տուեալ եղև նմա յարքայէն պատիւ
փաշայութեան Հալպօլ՝ եւ չոգաւ անդր,
եւ ի պնայն նորա ի Հալպօլ զկնի երկու սա-
սոց՝ արքունիք եղև զնմանէ, վասն որոյ եւ
արքայ բնկեցիկ արար զնա ի պատուոյ անտի,
եւ հրամայեաց զալ աս ինքն, ուստի եւ նա
ի Հալպօլ քաղաքէ եկեալ պատահեաց ար-
քայի յիգնիքմիտ քաղաքի, որ զարձ արար-
եալ էր ի Ըստանպօլ, եւ տուեալ զնա Միւ-
րատ արքայ, ի հետ իւր երեւ ի քաղաքն
Ըստանպօլ, եւ տուեալ նմա զարձեալ զպա-
տիւ փաշայութեան՝ շնորհեաց եւ զայս կալ-
ւած Ֆէրիտուն փաշային նմա, եւ պալատ
մեծակառոյց ի յԱխօն Գափուն, եւ ազարակ
ի զիդն Քեաղէտիսանէ, եւ զամենայն պի-
տոյս նորա արքունուստ կարգեաց, որ
ապա՝ զկնի մեցից սմաց սպանաւ յաւուրս

սուլթան Իպրահիմին, ի թուականի հիճ-
րէթին 1051:

Աստանօր շինեաց սուլթան Ապալու Հա-
միտն նոր մղիթի, եւ քաղանի եւ շարու,
եւ փոխեաց աստ զմաքսատունն ի Ռումէլ-
եան Հիսարէն: Եւ կալուած հաստատեաց ի-
մարէթին իւրոյ որ ի Ըստանպօլ ի ներքս ի
զրան անդ քաղաքին Պաղչէ Գափուսի կո-
չեցեալ:

*

Չորրորդ պուսուն է այն, որ ասի Թօլ-
մալ Պուսնի: Եւ քանզի ի վաղ ժամանակս՝
աստ որջացեալ Թօլմալօն անդղամաց, որք
են ասպատակք ծովու՝ բազում ոճիրս զոր-
ծէին, վասն այնորիկ կոչեցաւ անուն տեղ-
ւոյս Թօլմալ Պուսնի:

Եւ այլ յառաջ ընթացեալ սակաւիկ մի՝
է ծոցն ծովուն Իսթէնէէի, ուր ջուր ծովուն
մտեալ է ի ներքս:

Գոն անտանօր պարտէզք, եւ աս եղերք
ծովուն զարպասք մինչ ի Եէնիքեօյ:

Եւ անդ ի հովտի Իսթէնէէին ջուրք կար-
կաջահոսին, եւ ի մի հաւաքեալ ի մէջ հով-
տին՝ ընդ մեծ թաղն տաճկաց ի ծովն բերին:

Ի յերինա այսր զիւղի՝ ելանէ կաւն այն
սպիտակ, որ է նիւթ խեցեղէն անօթոց,
զորս կաղմեն բրուտքն Ըստանպօլու ի սահ-
ման Էյլուսլի:

Եւ աստի նախ տանէին սալլիք զկաւն ի
Քեաղէտիսանէ՝ յառաջ քան զշինուած զե-
տեղերեայ արքունի պալատին, եւ իրքեւ
այն շինեցաւ, ապա՝ սկսան զկաւն իջուցա-
նել ի ծովեղր Իսթէնէէին, եւ տանին նա-
ւուք ի յէյլուսլ յիսթէյլն Տէֆթէրտարի, եւ
անտի ապա՝ ի խանութս բրտիցն:

Մոց սորա յետ Գրըզ Աղաճին է՝ երկա-
րութիւն ընդ յայնութեան եւ ընդ մեծու-
թեան, եւ է նաւահանդիստ զեղեցիկ եւ եղ-
ջերաճեւ, իրր մղոնաշար երկայնաձեղեալ
յարեւելից յարեւմուտս ծոցոյն:

Բնակիչք սորա են տաճիկք, յոյնք եւ սա-
կաւիկ հայք:

*

Հինգերորդ պուսունն է Քեօյապաշին Եէ-
նիքեօյին: Այս զիւղ կոչի յունարէն Նէօ-
խորիօն, ալիսինքն նորադիւղ: Ի զիւղի աստ

զոն տաճիկը եւ հայր: Բայց առաւել յայնք, եւ ունին երկաւ եկեղեցիս, որոց մինն է մէ- ղոշի գաւորիարդին երաւաղէմի, Այի Եօրիկի կոչեցեալ: Երկրորդն Այ Նիկոլոս: Եւ երրորդն Բանայիս:

Գոն յայտ գիւղի, եւ երեք այտգմայր, Այի Եօրիկի: Այի Խարայամպոս: Եւ Այիս Բարասղեւի:

Իսկ տաճիկը ունին երկաւ մզկիթս, զորոց զմինն որ մերձ է ի Թաղն հայոց շինեալ է կիւղէլճէ Այի փաշայն, որ եղեւ մէղիբի տ- ղէմ ի Թուականի հիճրէթին 1029:

Եւ զմիւսն մօտ ի ծովեղր, եւ առ ընթեր բաղանուոյն շինեալ է Մօնրա Ձէլէպին, յոյր սակա եւ Թաղն որ յետ կոյս մզկիթին՝ կոչի Մօնրա Ձէլէպի Մահալլէսի:

Իսկ զբաղանին՝ որ մօտ է ի մզկիթն ի չարսույի անդ՝ շինեալ է Իսքէնաէր փա- շայն, որ եւ շինեալ է զճամին եւ զբաղանին եւ զմէտրէսէն, եւ մէքթէպն ի Գանլըճայի, որ է ի հանդիպող յայնկոյս նեղուցին:

Նստի աստ եւ դատը՝ որ է դատար, ընդ իշխանութեամբ մօնրային Ղալադայի:

Եւ մահքէմէ նորին ալմինքն դատարանն մերձ է ի բաղանին:

Ի ժամանակս պատերազմի, պարտական են սփա մարդ տալ ի սլաշտն արքունի նա- ւուց: Այլեւ տան տարեկան տուրս առաւել քան զայլ գիւղորէս նեղուցին, իրբեւ հա- զար երկու հարիւր զոսէ:

Բնակչաց սորա է ժողովել զխոտ մեծի դաշտին Թօղաթի, որ կոչի Ալպահօսը Չա- յիրի՝ յարօտ արքունի երկվարաց:

Մեծ վաճառ սորա է ապխտեալ ձուկն շի- րօզի, որ յամին բաղում չահ բերէ գիւղա- կանաց:

Սա թէպէտ գիւղ կոչի՝ բայց աւտն է բաղմութեամբ բնակչաց:

Եւ է գիւղս այս ի վիճակի Պատրիարդին Կոստանդինուպօլսոյ:

Եկեղեցին հայոց յայտ գեղջ՝ է յանուն Սուրբ Աստուածածնին:

Եւ մօտ եկեղեցւոյն՝ է եւ գերեզմանա- տունն հայոց, եւ մերձ ի նա աղբիւր մի, զոր շինեալ է կուսան օրիորդ մի՝ ի հայոց աղ- ղէ, ուր եւ նշան Սրբոյ Խաչին կայ զբոյժեալ ի նմա, եւ յայն սակա կոչի Էրմէնի Ձէլմէսի:

Ի գիւղիս յայտիկ նուազ էր ջուրն, բայց հրամանաւ մօրն Սէլիմ արքային երրորդի,

քանի ինչ աղբիւրք շինեալ ի նմա, եղեւ ա- ռասուքիւն ջրոյ, եւ այս պատահեաց ի քուականին ՌՄԶԲ:

Չայս գիւղ երբեմն կոխեալ աւար հարին հակառակորդք, քանդիլ գրեալ է ի պատ- մութիւնս օսմանականաց, թէ՛ ի Թուա- կանի հիճրէթին 1033: Ի ժամանակս սուլ- ղան Միւրատին Չորրորդի, մինչ նաւահան- ղէսն Թուրքաց զբաղեալ էր ի Բէթլէ ի դորձ Թաթար խանին, գաղազքն որք բնակին զգե- տովն Տօնաւիսի, որ է Թէն Սուլին, Թա- փուր զսեաւ ծովն դուեալ, եւ ընդ այն 150 շաղաւ նաւօք յարձակեալ, եւ ի չորրորդում աւտըն շէլվալի ի նեղուցն սեաւ ծովուն եկ- եալ, եւ դառաջեաւ ծովեղերեալ գեղջն՝ որ կոչի Սարի Եօր ի ներքս ընթացեալ, կոխե- ցին զեէնիքիօյն՝ եւ զգիւղն յաւարի առեալ, կիզմամբ քանի մի կրօնակոց մնաւ արարին, զորմէ յուր եղեալ ի Ըստանապօլ, եւ անտի պատմանէիք եւ սէկպան սլաշին զօրօք ի նաւս մտեալ՝ եկին զիմեցին ի վերայ, եւ զաղազքն ոչ կտրացեալ կալ՝ մնալ եւ զղէմ ունել, յետս զարձեալ ի ծով անդը ի փա- խուստ չըջեցան: Եւ այս համարձակութիւն նոցա զարմանալի իմն էր, որպիսի երբէք չէր եղեալ յիմիք ժամանակի:

Եւ վասն այն՝ երկու բերդակք կերտե- ցան, ի վերին ծալքի նեղուցի սեաւ ծովուն հանդէպ իրերաց աստի եւ անտի, եւ սահ- նակօղ պահապանք եւ Թնդանօթք եղան ի նոսա, որք ի տաճկաց կոչին դավազ գալէ- լէրի: Շինեցաւ ի վերջին ժամանակս գու- ռուպիյէ Բեօյին ի բնակութեան հաշոց սո ծովեզերքին որ ընդ մէջ Բեօյ պաշիին եւ Գալէնսէրին: Եւ լցաւ ծովեզերեայ քուսրք եւ գեղեցիկ պարսիգօք եւ այս եղեւ ի հին- րէրի...

Եւ յետ սորա է Գալէնսէր Պաղչէսին, որ է գաշտիկ նեղ եւ ծառուտ առ ծովեզերն, եւ ներքսակողմն նորին հովիտ զապեալ յանձե- Թեթ լերանց. եւ վայր զուարճալի եւ գեղե- ցիկ:

Առեալ զանունս զայս ի աէրվիչէ ու- մեմնէ:

Պատմի թէ՛ տեղիս այս նախ քան զամս ինչ՝ ոչ էր չէն, այլ վայր անբնակ: Եւ ի ժամանակս սուլղան Մուսղաֆային եր- րորդի, Մօլտօլանճի Այի աղայն (որ յետոյ փաշա եղեւ, եւ ապա մէղիբի աղէմ ի Թուա-

կանի հիմարէթին 1183) ի դռն իւրում պօսթանճի պաշի վասն անկասկած ապահովութեան տեղւոյս ի մնասուց չարագործաց, օճազ շինեալ եւ հաստատեալ, եւ ի տեղւոյն յայտնիկ ուսթա, պօսթանճիս եղեալ, արար զսա վայր զրօտանաց, եւ տեղի երթեւեկութեան արանց եւ կանանց:

Աստ ծօտ է եւ այաղմա Սրբոյն Յոհաննու Մկրտչին առ ծովեղբրն, որ եւ յայտ առնէ զտեղի քակեալ շինուածոյ իրիք հին եկեղեցւոյ:

Եւ անտի փոքր մի յառաջ երթեալ հասանիմք ի Թարապիւս. եւ է սա զիւղ վայելուչ, ար բնակին յոյնք, եւ ունին եկեղեցի մի յանուն ... եւ սակաւ տաճիկք, եւ ունին ժողկիթ մի, եւ յոյժ սակաւ հայք:

Եւ կայ ի բացեայ՝ մերձ ի ծովեղբն ժայռին: Եւ բնակիչք սորին որք կան ի ներքին կողմն ծոցոյն՝ կարօտ են հիւսիսային հողմոյն. իսկ եղեալքն ի ծովեղբեւոյն նորին՝ կշտապինդ վայելեալք ի շնչմանէ փոյրազ հողմոյն՝ զովանան եւ բերկրին:

Այս ծովեղբեւայ զիւղ՝ կայացեալ է ի բերանի սեաւ ծովուն Պոնտոսի՝ հազիւ միով մղոնաւ բացակայեալ ի Բիւթանիոյ դէպ յաբեւմուտս:

Ի հնուան կոչիւր յունարէն Փարմադէս: Իսկ Առօրեկոս Պատրիարքն Կոստանդինուպօլսոյ, առ ի շանուանիլ վատահամբաւ անամբ անտանօր ժողովելոյն՝ զոր ինքն տար, կոչեաց զանուն զեղջն Թէրաբիս:

Զի Փարմադէս նշանակէ Թիւնատու, եւ Թէրաբիս՝ բժշկութիւն: Սոկրատ պատմադիր, զիրք է, զլուխ ժվ:

Այս զիւղ՝ է ի վիճակի մետրապօլիտն Տէրզոնի, որ է Թէրզօս, եւ էր սա քաղաք մի, իրր 30 մղոնաւ հեռի ի Ըստանպօլայ յեղր սեաւ ծովուն: Այլ քանզի ի Թէրզօս առ հասարակ այժմ բնակութիւն է տաճկաց, յայն սակս փոխեցաւ աթոռն ի Թարապիւս, եւ մետրապօլիտն նստի ի նմա:

*

Վեցերորդ բազուկ եւ պուռուն է Բիրէճ Պուռնին, անշուք անուամբ կոչեցեալ. բայց վայր զեղեցիկ, եւ զրօտարան աննման, տեղի զօրացուցիչ եւ բնդունարան շնչման հողմոյն հիւսիսոյ: Ուր եւ վատարանք կրոյ

վատին հանդէպ սորին ի կողմն Ասիոյ Անատօլեան մասին, որոյ վասն՝ տեալ է զանուն Բիրէճ Պուռնի:

Աստ նորոյ շինութիւնն արար Կիւմրիւքճի Իսհազ աղայն անուանի, եւ շինեաց զաղբիւրն մշտահօս ի նմա, ի ժամանակս սուլղան Մահմուտին, ի Թուականի հիմարէթին 1163: Որ եւ զվայրն զայն որ նախ կոչիւր Հասան Աղա Պաշէնի, ինքն ստացեալ արար զնա պարտէզ չքեղ եւ վայելուչ:

Այս Հասան աղա էր կիւմրիւքնի ի ժամանակս սուլղան Մէհմմետի Զորորդի շուրջ զբուականութեամբ հիմարէթին 1064: Եւ սա շինեաց ի Թարապիւս տունս մեծակառոյց եւ պարտէզ մի գուարնալի, գորմէ ասի քէ՝ էր ուրացեալ ի հայոց ազգէ, որոյ եղբայրն Անտոն կոչիւր, եւ էր ի գործ սպասու փռանկաց, եւ ունէր տուն ի Պէկօղլին, որ այժմ է պալատ դեսպանին Ֆիլամէնկաց: Սա՝ օգնութեամբ եղբօր իւրոյ Հասան աղային զանձեալ մքերեաց բազում ինչս, բայց հայոց ոչինչ օգտեաց՝ եւ ոչ մի ինչ արար արժանի յիշատակի, այլ փախուցեալ յետոյ ի Լիվօնա, կորեալ եւ անհետ եղել:

Այս տեղի Բիրէճ Պուռնի կոչեցեալ՝ հայի ուղղակի ի նեղուցն սեաւ ծովուն, այսինքն պօղազն Գարա Տէնիզին:

Եւ աստ է այաղմայն Սրբոյն Եւֆրմեայ, զորոյ կամարն շինել ետ ի նորոյ հայկազուն Եաղուպ աղայն անուանի: Առ որով տեսանի հետք ինչ եղծեալ տաճարի ի բլրի նորին:

Եւ զկնի սորա է Բէֆէլի Բեօյին, որ է զիւղ փոքրիկ: Աստ նախագոյն քէֆէցի տաճիկք բնակեալ, եւ վասն այն՝ ալպէս անանակոչեալ:

Ունի սա ծոց մեծ, զովով ձկնարան ձրկանց եկելոց ի ծովէն Պոնտոսի:

Ուր ի ներքս ի նմին է Գրող Աղասն վայր վայելուչ՝ ի ծայրի Պիւլիւք Տէրէին:

Նաւքն ի սեաւ ծովէ եկեալք, նախքան զմտանելն ի Պօղազն՝ տեսանին աստի: Եւ է սա զիւղ ինչ փոքրիկ:

Եւ յետ սորա է զիւղն Պիւլիւք Տէրէի՝ յորում զոն տաճիկք, յոյնք, եւ լատինացիք եւ սակաւ հայք:

Եւ կոչի սա յունարէն վաթիղօլրօս, այսինքն խորին ծոց:

Մասն ինչ ջրոյն Պիւլիք Տէրէի ստոր-
երկրեայ անցիւք զնայ յայլ եւ այլ աղբիւրս :

Եւ է սա վերջին տեղի թաղաւորական
պիւնիչի, ի Ռումէլի կողման, ի զեղեցիկ
դաշտի անդ, ուր դոյ եւ ջուր մի, որ ասի
Հիւնքեար Սուլի: Ասա է եւ Գրքդ Աղաճն,
որ եւ կոչի եւէտի Գարտաշյար, վասն
խառնման արմատոց նոցա ընդ միմեանս
վիշտասան մայրեաց :

Դաշտն՝ որ առ ընթեր Պիւլիք Տէրէին
զեղեցիկ է յոյժ, եւ ի դաշտի աստ առ ընթեր
ծառոցն հովանոց էր արքայի, որ այժմ դո-
լով քակեալ՝ հիմունք նորա երևին: Այս
չքնաղաղոյն դաշտ՝ հրաւիրեալ ձղէ առ
ինքն գաղգս յատինացւոց ընտրել զինքն յի-
նել վայր ամառատանի, որք եւ յաճախեալ
տառ մանաւանդ յառաջին ամա թաղաւորու-
թեան աւուրան Ապտիւլ Համիտին, զմո-
վեղրն հարթեալ հորեցին վասն զիւրրնթաց
լինելոյ ձիափար կառացն իւրեանց :

Եւ յառաջ կոյս ի ներքսակողման հովտին
այնորիկ դոյր պարտէղ արքունի, ուր էր
բաղմութիւն աղբիւրաց :

Եւ սալալատակ շաւիղ ի դաշտին, որ էր
ճանապարհ արքայի՝ ընդ որ անցեալ զնայր
արքայ ի պարտէղ իւր :

Եւ աստի մինչ ի Ֆէնէր անտառ է ծառա-
լիտ յի աղղի աղղի կենդանեօք :

Եւ է սա տեղի արքայական սրսօնի :

Աստանօր զսալալատակ շաւիղ արքունի
ճանապարհին, նոյնպէսակ զաղբիւր Քէ-
ֆէլի Քեօյին՝ նորոյեաց Հասան փաշայն,
որ էր անուանի գափուտան փաշա առ սուլ-
դան Ապտիւլ Համիտի :

Ասա լինի կա իմն զեղին, եւ աստի եր-
թայ նաւուք ի Լատանալոյ, առ բրուտան էյ-
եուպի, որպէս ի յիսթէնէ զեղջէ՝ կաւն
սպիտակ :

Դոյ եւ աստ գործարան բրտի՝ ուր կաղ-
մեն կաւակերտ անօթք, այլ եւ թուրծաղիւս
եւ կղմինտր ի պէտս շինուածոց :

Ի շարի աստ է տեղին այն՝ որ կոչի
Սարբեար, եւ է սա զիւղ իմն՝ ուր դոն
հայք, յոյնք, տաճիկք, եւ լատինացիք :

Սա ունի ոսկերեր լերինս, բայց փորձ-
եալ երբեմն զտին անբաւական ծախուցն՝ եւ
զաղարեցան յաշխատութեան :

Օդն սորին եւ ջուրն՝ զարման մեծ է

հիւանդաց, եւ ատոյջութիւն տկարաց, քան
զդեղ բժշկաց :

Եւ ի հովտի Սարբեարին՝ ի նախնումն
էին մեհապտանք երեք՝ փոքր ինչ տաքա-
կայք ի միմեանց, որոց այսպէսք են ջուրքս
այսօքիկ :

Քէստանէ Սուլի: Կիւմիշ Սուլի: Եւ Ֆըն-
տրդ Սուլի՝ կոչեցեալք :

Մերձ ի ջուրս յայս՝ է եւ աւաղան ինչ
ջրարուղի, զոչով այսպէս հին մեհապտա-
նի, որ կոչի Հիւնքեար Սուլի: Սա էր յա-
ռաջագոյն զիւղ բնակութեան հայոց, եւ ու-
նէր տանն եկեղեցի մի յանուն Սրբոյն Յա-
կոբայ: Բայց արկած շարին փոխեաց զնոսա
ի զեն կրօնին այլազեաց :

Եւ յետ սորա է զիւղն այն՝ եւնի Մա-
հալէ կոչեցեալ, որոյ բնակիչքն են յաղղն
յունաց, յորում մօտ առ ծովեղերն երեւի
հիմն եկեղեցւոյ՝ եւ աղբիւր առ նմին :

Եւ յայսմ տեղում էին եկեղեցւոյն՝ սկսուն
շինել նոր եկեղեցի մի յանուն Յոհաննու
կարապետին յամի տեառն 1799 հոկտեմբերի
Ժ: Ի թուականի հիճրէթին 1224 ձէմաղիլի-
վէլի 22 յաւուրն երկուշարթի, եւ աւարտե-
ցին Տէրամբ :

Աստանօր հայեցեալ ի հովիտս եւ ի ձորս
նեղուցիս այսորիկ, յերկոսին կողմունս նո-
րին, ի Ռումէլին եւ յԱնատոյին ի դարնան
եղանակի, տեսնեմք առ հասարակ զվայր-
սըն զալարազեղ կանաչացեալ, եւ վայելչա-
պէս զոյնղոյն ծաղկապարզեալ :

Եւ աստ զոն հիսարք շինեալք հանդէպ ի-
բերաց յեւրօպայն եւ յԱսիայն: Եւ զօրք ի
նոսա եղեալ եւ հաստատեալ, եւ պահնուլք
արքունական կարգեալ կացուցեալ, որք կո-
չին զովազ գալէլէրի: Ուր կան պարտէղք եւ
պաղչէք բազում եւ զանազան :

Եւ զինի նորին ի շարի անդ է տեղին այն՝
կոչեցեալ Մաւրօմոլոս, որ ըստ յունաց
Թարգմանի Սեւ քար, եւ ըստ առանկաց
Գարա Դաշլի :

Առ ընթեր որոյ յառաջին ժամանակս
կառապաշտութեան էր մեհեան Սէրարիոնի՝
հեթանոս բնակչացն Բիւզանդիոնի, եւ տա-
ճար Ռէայի մօրն ամենայն կոոց, որ յետոյ ի
ժամանակս քրիստոնէութեան շինեցաւ տուն
եւ տաճար մօր Տեառն մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի եւ Տիրուհոյն Հրէշտակաց եւ մարդ-
կան :

Յորում լինէր բանիյիւրն աորա ի ժե օգոստոսի: Բայց յամի տեառն 1617: Եւ ի թուականի հիւնդէթին 1026 մնացեալ էին անդ միայն խուզք երկու եւ անտառ փոքր, ապա՝ յաճախեալ կրօնաւորացն յունաց՝ յաւելին շինուածս ինչ, պարտէզս, այգիս, աղօրիս, եւ որսարանս ձկանց, նաեւ եկեղեցի եւս հաստատեալ, բողմացան թուով մինչեւ տասն:

Եւ ապա՝ ի թուականի հիւնդէթին 1102: Եւ յամին 1690 ի հիմանց քահեալ շինեցին եկեղեցի եւ մենաստան մեծ: Այլ ի հիւնդէթին 1128: Եւ յամին տեառն 1716 լուեալ չհիտ Այի փաշայն, քանդել ետ զեկեղեցին եւ զմենաստանն, որ էր յանուն Վերափոխման Սուրբ Աստուածածնին, եւ զայգիս մերձ ի դուռն նորին: ՌճԼԶ յունկարի հի:

Ձկնի այնորիկ ի ծայրի նեղուցին է ժայռ ինչ, Բեօքէ Դաշի կոչեցեալ, եւ են աորա երկու սեպք ժայռից սակաւ ինչ բացատ ի ցամաքէ Ռումէլեան Ֆէնէրին, եւ կոչին զիանեան կղզեակք:

Եւ ի միումն ի աոցունց երկոցունց կայր կանդեալ երբեմն սիւն մի, որ ունէր ի խարսխի իւրում մակաղիւր լատինական յանուն Օգլաւիանոսի, այսինքն Օգոստոսի կայսեր, որ այժմ անկեալ է ի մէջ ծովու՝ եւ պատուանդան նորին կայ եւ մնայ: Բայց սիւնս այս յանուն Պոմպէոսի յածի ի բերանս ռամկաց:

Ձգիանեան կղզեակսն՝ հին բանաստեղծք յունաց կոչեն սիմփրիզատէս, այսինքն միակրեցեալք, որք զովով փոքր ինչ տարակայ ի միմեանց, որոց հայէին ի հանդիպոյ երկու երեւէին, իսկ ի փոխելն սուղ ինչ՝ զգիրս՝

(Շար. 4)

միակցեալ երեւէին: Համարէին եւս հինքն զսոսա կենդանիս՝ եւ շնորհս եւ շարժականս՝ առիթ առեալ ի ծածկելոյ նոցա յաւանաց՝ ի ժամանակս սաստիկ հողմոյ, եւ բանալոյ ի ժամանակս հանդարտութեան, որով սեպացեալ ծայրք նոցա՝ հեռանալ եւ մերձեանալ թուին միմեանց եւ շարժիլ:

Չորմէ ասի թէ՝ էր սա ի հին ժամանակս տեղի զոհից հեթանոսաց: Ուր զոհէին երթեւեկք նաւորդաց սակս յաջողութեան ճանապարհի:

Եւ ի Ռումէլեան կողման արտաքոյ Պօղաղին տեսանի մզոնաւ մի հեռի Ֆէնէրն որպէս զաշտարակ իմն զեկեղեցիկ, եւ պահակք անտանոր արք իրր Եօթն կամ ութն, յոր սանդղօք ի վեր ելանեն, որ ունի աստիճան հարիւրտասն: Ուր է միջնայարկ եւ վերնայարկ, յորում ի միջնայարկի նորին են երկու կոնք պղնձի՝ երկայնութեամբ միոյ միոյ կանգնոյ. ուր յերկոսին կոնքսն լցեալ լինի իրր չորս օխայ իւղ ութն պատրուգօք լուցեալ, եւ վառին նոքա զկնի մտիցն արեւու՝ մինչեւ ցառաւօտ:

Նմանապէս եւ միւս կոնքն պղնձի՝ որ եղեալ է ի վերնայարկին՝ վառի ի զիշերի նոյնչափ իւղով եւ պատրուգօք, եւ բոլոր չրջապատք երկուց յարկացն այնոցիկ մաքուր ապակեօք պատեալ որպէս զՓանուս տո ի լինել անխառն ի հողմոյ:

Եւ ասեն թէ՝ աղօտ նշոյլ սորա ժամանէ մինչեւ ի տարածումն միջոցի հարիւր մզոնաչափ տարակայութեան:

Աստանոր աւարտեցան ծովեղերեալ տեղիք նեղուցի, մասին Թրակիոյ: